

Տեղի Ունեցաւ ՀՅԴ 34-րդ Ընդհանուր Ժողովի Պաշտօնական Բացումը



28 փետրուարին «Անի Փլազա» պանդոկի «Անի» սրահին մէջ տեղի ունեցաւ բացման պաշտօնական արարողութիւնը Հայ յեղափոխական դաշնակցութեան 34-րդ Ընդհանուր ժողովին, որուն կը մասնակցէին աշխարհի շուրջ 28 երկիրներէ աւելի քան 100 ներկայացուցիչներ եւ հրաւիրեալներ:

Բացումը տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան, Արցախի Հանրապետութեան եւ ՀՅԴ-ի քայլերգներով:

Տէրունական աղօթք կատարեց Նաթան արք. Յովհաննիսեան, որ նաեւ փոխանցեց Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսին ողջոյններն ու օրհնութիւնը:

Խօսքեր արտասանեցին ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեան եւ ՀՅԴ Գերագոյն մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթէլեան:

Ընդհանուր ժողովը, որ ՀՅԴ Համագլխային կառոյցի բարձրագոյն ժողովն է, կը գումարուի 4 տարին անգամ մը: 34-րդ Ընդհանուր ժողովը առաջինն է Արցախեան 44-օրեայ պատերազմէն ետք, անիկա պիտի տեւէ մինչեւ 8 մարտ:

ՀՅԴ 34-րդ Ընդհանուր Ժողովը Աւարտեց Աշխատանքները եւ Ընտրեց Բիւրոյի Նոր Կազմ



8 Մարտ 2022-ին Հայաստանի մէջ գումարուած ՀՅԴ 34-րդ Ընդհանուր ժողովը աւարտեց 28 փետրուարին ընթացք առած իր աշխատանքները: Ժողովին օրակարգը կը բխէր հայրենիքի եւ հայութեան առջեւ ծառացած ներազգային, միջազգային եւ տարածաշրջանային մարտահրաւէրներէն, որոնց շուրջ ծաւալեցան խորքային քննարկումներ. ճշգրտեցան յաջորդ քառամեակի ՀՅԴ քաղաքական ուղեգիծն ու ռազմավարութիւնը եւ տրուեցան որոշումներ՝ Հայ դատի, արտաքին եւ ներազգային ուղղութիւններով աշխատանքներու, քարոզչական եւ

տնտեսական քաղաքականութեան վերաբերեալ:

Ժողովը քննեց եւ գնահատեց ընթացաւարտ ՀՅԴ Բիւրոյի եռամեայ գործունէութիւնը, ներկազմակերպական խնդիրներն ու կատարուելիքները:

Ընդհանուր ժողովը իր օրակարգը սպառելէ ետք ընտրեց կուսակցութեան բարձրագոյն մարմին՝ Բիւրօն:

ՀՅԴ Բիւրօն իր անդրանիկ նիստին ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ ընտրեց Յակոբ Տէր Խաչատուրեանը:

ՀՅԴ նորընտիր Բիւրոյի անդամներն են՝

Վիգէն Բաղումեան (Իրան)

Դաւիթ Իշխանեան (Արցախ)

Արսեն Համբարձումեան (Հայաստան)

Կիրօ Մանոյեան (Հայաստան)

Մկրտիչ Մկրտիչեան (Լիբանան)

Խաթակ Մկրտիչեան (Ամերիկայի Միացեալ Նահանգներ)

Արմէն Ռուստամեան (Հայաստան)

Յովսէփ Տէր Գէորգեան (Եւրոպա)

Րաֆֆի Տօնապետեան (Փանատա)

Մուրատ Փափազեան (Եւրոպա):

ՀՅԴ Հանրային Կապերու Գրասենեակ
8 Մարտ 2022
Դիլիջան

BOOK YOUR
TEST DRIVE TODAY!

— All-New —
CIVIC
— SEDAN —

TRO BACHEKJIAN
MIKE TOROSSIAN
KEVORK ASADOURIAN

HONDA
GABRIEL

HONDA

7000, boul. Henri-Bourassa Est,
Montréal-Nord, QC H1G 6C4
☎ : 514 327-7777



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Մեփականատեր
Յարութ Միփան

Հնտանէկան բացառիկ գործառնութիւն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

 **IN HOUSE**

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Գանատայի Հայ Դատի լանձնախումբը բուռն կերպով կը հակազդէ պատգամաւոր Գուփըրի Խոջալուի դէպքերուն առնչուող յայտարարութեան

Փետրուար 16-ին, Գանատայի Ալպերթա նահանգի մայրաքաղաք Էտմընթընի Սենթ Ալպերթ ընտրատարածքի Գանատայի խորհրդարանի Պահպանողական կուսակցութեան անդամ Մայքըլ Գուփըրը հակահայ խնդրագիր մը ներկայացուց խորհրդարանի նիստի ընթացքին, որ կը վերաբերի 1992 թուականի Խոջալուի իրադարձութիւններուն: Գանատացի պատգամաւորին հովանաւորութիւնը վայելող խնդրագիրը կը կրէ 1500 ատորագրութիւն եւ ներկայացուած է Network of Azerbaijani Canadians ատրպէյճանական կազմակերպութեան կողմէ: Կեղծ տուեալներով խմբագրուած եւ ատրպէյճանական հակահայ պետական քարոզչութիւնը տարածող խնդրագիրը՝ հայերուն կ'ամբաստանէ Խոջալուի մէջ «սպանդներ կազմակերպելու» մեղադրանքով:

Մայքըլ Գուփըր խորհրդարանի նիստի ընթացքին իր յայտարարութեան մէջ անհիմն մեղադրանքներ հնչեցուց հայկական բանակի հասցէին՝ կապուած 1992 թուականի փետրուարին Արցախի Իւանեան (Խոջալու) քաղաքին մէջ տեղի ունեցած իրադարձութիւններուն՝ ամբողջութեամբ անտեսելով վերջին պատերազմի ընթացքին Ատրպէյճանի կողմէ գործադրուած ռազմական յանցագործութիւններն ու մարդկային իրաւանց խախտումները:

Աւելին, խնդրագրի ներկայացման նախօրեակին, Գանատայի Հայ Դատի յանձնախումբը կապ հաստատած է Գուփըրի գրասենեակին հետ՝ խնդրելով պարզաբանել պատգամաւորին դիրքորոշումը՝ խնդրագիրը հովանաւորելու առնչութեամբ: Գրասենեակը այս հարցին արձագանգած է յայտնելով, որ խնդրագրի հովանաւորութիւնը անպայմանօրէն չ'ենթադրեր պատգամաւորի զօրակցութիւնը խնդրագրին: Այս մասին անդրադառնալով, Հայ Դատի յանձնախումբին կողմէ հրապարակուած ֆէյսպուքի գրառումը յստակօրէն կը հաստատէ, որ Մայքըլ Գուփըր վերոնշեալ հաստատումին հակոտնեայ դիրքորոշուելով բացայայտ կերպով ստած է Հայ Դատի յանձնախումբին:

Գանատայի Հայ Դատի յանձնախումբի Օթթաուայի գրասենեակի գործավար Սեւակ Պելեան անդրադառնալով Գուփըրի հարցին, «Հորիզոն»ին յայտնեց, որ յանձնախումբը անմիջական կապի մէջ է Գանատայի ընդգիմադիր Պահպանողական կուսակցութեան ղեկավարութեան հետ, այս հարցին մասին յաւելեալ լուսաբանութիւններ եւ յստակացումներ ստանալու առնչութեամբ: Սեւակ Պելեան նաեւ յայտնեց, որ խնդրագիրը անհատական նախաձեռնութիւն է եւ ոչ մէկ առնչութիւն ունի Գանատայի Պահպանողական կուսակցութեան դիրքորոշումներուն հետ:

Նշենք նաեւ, որ Գանատայի խորհրդարանի նիստերու ընթացքին ներկայացուած խնդրագիրները օրէնսդրական ուժ չունին եւ պարզապէս խորհրդարանական ընթերցման համար են: Կառավարութիւնը խնդրագրերու առնչութեամբ որոշումներ չի կայացներ, սակայն խնդրագրերուն պէտք է գրաւոր պատասխան փոխանցէ:

Այս իմաստով, ատրպէյճանական այս խնդրագիրը բանաձեւ չէ եւ որպէս այդպիսին օրէնսդրական կարգով քուէարկութեան ենթակայ չէ:

Արդէն իսկ Օնթարիոյի Հայերու Միացեալ Խորհուրդի կայքէջին վրայ ստորագրահաւաք սկիզբ առած է, որուն նպատակն է պահանջել պատգամաւոր Գուփըրէն հերքել իր մեկնաբանութիւնները եւ հրապարակաւ ներողութիւն խնդրել գանատահայերէն: Ստորագրահաւաքը սփռուած է Գանատայի Հայ Դատի յանձնախումբի կայքին եւ ընկերային ցանցերու հարթակներուն վրայ:

Գուփըրի յայտարարութիւնը չի ներկայացներ Արցախի նկատմամբ Գանատայի Պահպանողական կուսակցութեան տեսակէտը:

Հայ Դատի յանձնախումբի պահանջին ի պատասխան՝ Գանատայի Պահպանողական կուսակցութիւնը յանձնախումբին յղուած յատուկ նամակով հաստատ երաշխիքներ տուած է, որ Գանատայի խորհրդարանի պատգամաւոր եւ Պահպանողական կուսակցութեան անդամ Գուփըրի յայտարարութիւնները չեն արտացոլացներ Պահպանողական կուսակցութեան պաշտօնական քաղաքականութիւնը եւ նշեալ պատգամաւորին կողմէ խորհրդարանական ելոյթի ընթացքին հնչած կարծիքները իր անձնական տեսակէտերն են եւ ոչ Պահպանողական կուսակցութեանը:

Աւելի'ն, Պահպանողական կուսակցութիւնը վերահաստատած է, որ արցախեան հիմնախնդրին վերաբերեալ կը շարունակէ պահպանել նոյն քաղաքական դիրքորոշումը՝ կոչ ընելով յարգել Արցախի ժողովուրդի ինքնորոշման իրաւունքը, վերսկսիլ բանակցութիւնները ԵԱՀԿ Մինսկի խումբի հովանաւորութեամբ եւ վերադարձնել բոլոր ռազմագերիները:

www.horizonweekly.ca

CONNECT WITH US:

 facebook.com/pages/horizonweekly
 @horizonweekly
 horizonweekly
 YouTube – Horizon Weekly TV

ADVERTISE YOUR BUSINESS HERE



ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ «ՀՈՐԻԶՈՆ»Ի ՁԵՐ ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԴԻՄԵՑԷՔ՝ ԺԱԳ ՎԱՐՊԵՏԵԱՆԻՆ
CALL JACK VARBEDIAN (416) 722-9225

Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանը 50,000 տոլարով հաստատեց «Անի Անահիտ Տէմիրճեան-Երկաթեան» Բարեգործական Եւ Կրթական Հիմնադրամը



Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանը հաստատեց «Անի Անահիտ Տէմիրճեան-Երկաթեան» Բարեգործական Եւ Կրթական Հիմնադրամը, եորքի համալսարանի «Glendon School of Public & International Affairs» բաժանմունքի նախկին տնօրէն Օրիորդ Անի Անահիտ Տէմիրճեան-Երկաթեանի՝ 50,000 տոլարի առատաձեռն նուիրատուութեամբ:

Այս հիմնադրամը պիտի աջակցի Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի բարեսիրական ծրագիրներուն՝ զօրակցելու Գանատայի մէջ ապրող Սուրիացի եւ Լիբանանցի հայ գաղթականներու նւթական եւ կրթական կարիքներուն:

Այս առիթու, Օրիորդ Տէմիրճեան-Երկաթեան իր սրտի խօսքին մէջ նշեց, որ «Հայ եկեղեցին իր դարաւոր

պատմութեան ընթացքին եղած է այն միակ հաստատութիւնը, որ վառ պահած է մեր համայնքներու հոգեւոր, կրթական ու մշակութային կեանքը: Մենք պէտք է գնահատենք անոր դարաւոր առաքելութիւնը եւ աջակցինք Հայաստանի ու սփիւռքի մեր համայնքներու հզօրացման գործին»:

Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանը, Օրիորդ Տէմիրճեան-Երկաթեանի առատաձեռն նուիրատուութեամբ, առաւել թափով պիտի շարունակէ իր ընկերային-բարեսիրական առաքելութիւնը, իւրաքանչիւրին պարգեւելով առողջ կեանքի սկիզբ եւ ուսանելու հնարաւորութիւն:

Այս առիթով, Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տէր Բաբգէն Արքեպիսկոպոս Չարեան Թորոնթոյի մէջ անձամբ այցելեց Օրիորդ Տէմիրճեան-Երկաթեանին բնակարանը, շնորհակալութիւն յայտնեց անոր ինքնաբուխ նուիրատուութեան համար ու գնահատեց անոր տաժած վստահութիւնը Ազգային Առաջնորդարանին ու անոր հովանիին տակ գործող ընկերային-բարեսիրական հիմնադրամներուն: Առաջնորդ Սրբազանը շեշտեց սոյնպիսի հիմնադրամներու հաստատման կարեւորութիւնը՝ յանուն մեր երիտասարդութեան, Ազգին, Եկեղեցիին, համայնքներուն ու հայրենիքի բարգաւաճման:

Նշենք, որ Օրիորդ Տէմիրճեան-Երկաթեան 2014-2015 թուականներուն, եղած է ՄԱԿ-ի առաքելութեան (UNSOM) քաղաքական հարցերու եւ միջնորդութեան խումբի յանձնակատար տնօրէնը Սոմալիի մէջ: Ան պատասխանատու էր խաղաղութեան հաստատման ու պետականաշինութեան ծրագիրներուն, ներառեալ՝ ռազմական-քաղաքական կայունացման, քաղաքական բարեփոխումներու, պետութեան ձեւաւորման, հակամարտութեանց կանխարգելման, տեղական հաշտեցման ու սահմանադրութեան կանոնաւորման գործին:

2004-2013 թուականներուն, աշխատելով ՄԱԿ-ի առաքելութեանց ոլորտին մէջ, գլխաւորած է «UNDP»-ի ժողովրդավարական կառավարման աշխատանքները Իրաքի, Լիպիոյ, Սոմալիի, Արեւելեան Եւրոպայի եւ Կեդրոնական Ասիոյ մէջ:

«UNDP»-ի ջրջանակներուն մէջ, ան պատասխանատու պաշտօն վարած է Իրաքի (2004-2007), Սոմալիի (2008-2009) – Լիպիոյ (2011-2012) անցումային կառավարման, սահմանադրութեան մշակման, ընտրութիւններու կայացման, տարրական, քաղաքացիական ու հասարակական զարգացման եւ պետական կառավարման բարեփոխումներու գործընթացին մէջ:

2010 թուականին, երկրաշարժէն ետք, ան գործուղուած է Հայիթի, ղեկավարելու համար «UNDP»-ի ու Համաշխարհային Պանքի յետադէտեան կարիքներու գնահատումը:

Ան 20-ամեայ աւանդ ունի կառավարման, քաղաքականութեան ու ծրագրաւորման ոլորտին մէջ: Գանատայի Դաշնակցային կառավարութեան մէջ եղած է Կեդրոնական Գործակալութեան՝ անվտանգութեան, հետախուզութեան եւ վերանայման յանձնաժողովներու անդամ: Իսկ ՄԱԿ-ի եւ Կեդրոնական Պանքի համար աշխատած է Յորդանանի, Եգիպտոսի, Թունիսի, Պաղեստինի, Զիմպապուէյի, Հարաւային Աֆրիկէի եւ Նիճերիայի մէջ:

Առաջնորդ Սրբազան Հայրն ու Գանատայի Հայոց Թեմի Կրօնական Ժողովն ու Ազգային Վարչութիւնը բարձրօրէն կը գնահատեն Օրիորդ Տէմիրճեան-Երկաթեանի մտաղյացումը նման հիմնադրամի մը հաստատման եւ յատկապէս իր հոգատար վերաբերմունքը կարիքաւոր ընտանիքներու եւ ուսանողներու նկատմամբ:

ԴԻԻԱՆ
ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ



Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնէ՝
(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...
ԼՍԻՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻԻՆ ԵՒ
ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

***Նոր Հաւաք՝** **PERMIS DE QUÉBEC**
Voyages Haig Travel
4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2
Tel: + 1 514-284-7676
Email info@haigtravel.ca

Արտաքին թշնամիին դիմադրելու համար նախ պետք է մեր տունը կարգի բերենք. Յակոբ Տէր Խաչատուրեան

ՀՅԴ Բիւրոյի Գերկայացուցիչ Յակոբ Տէր-Խաչատուրեանի ելույթը Հայ Յեղափոխական Դաշնակցութեան 34-րդ Ընդհանուր ժողովի քացման ընթացքին.

Այս Ընդհանուր Ժողովը կը գումարուի մեր հայրենիքի ու հայութեան համար խիստ բախտորոշ ժամանակահատուածի մէջ. Հայաստանը կորսնցուցած է յաղթանակած երկիր ըլլալու հանգամանքը, Արցախը վերաւոր է եւ աշխարհասփիւռ հայութիւնը տազնապահար վիճակի մէջ է։ Մինչեւ Սեպտեմբեր 2020, մեր ազգային նորագոյն զարթոնքը Հայաստանի վերանկախացումէն եւ Արցախի ազատագրումէն ետք, խարսխուած էր անխոցելիութեան պատրանքին վրայ եւ, հակառակ ՀՀ բազմապիսի ներքին վերիվայրումներուն, մեր մտքին մէջ ամրագրած էր յաւերժական անկախ Հայաստանի տեսլականը։ Այսօր՝ խարխլած է այդ տեսլականը ու հայկական անկախ պետականութիւնն ալ՝ վտանգուած։ Այս իշխանութեան անընդունելի եւ աններելի քայլերու շնորհիւ տեղի ունեցաւ 44 օրեայ պատերազմի աղիտալի արդիւնքը, շարունակուող պառակտումի քաղաքակա՝նութեան սաստկացումը, մեր թշնամիներու հանդէպ ցուցաբերուող պարտուողական հոգեբանութիւնը, միակողմանի զիջումներու պատրաստակամութիւնը եւ կեղծ խաղաղութեան պատրանքով ժողովուրդը մոլորեցնելու ու թշնամիին հաճոյանալու ամբոխավարութիւնը։

Տասնամեակներու պայքարը իմաստազրկելու, արեան, տառապանքներու, զոհողութիւններու գնով ձեռք բերուած մեր յաղթանակը ոչնչացնելու այս ընթացքը պետք է կասեցուի։ Մեր նոր պետականութեան, ազգային նորագոյն զարթօնքի խորհրդանիշ հանդիսացող Արցախը ծանրագոյն հարուած է ստացած, բայց մեզի պարտադրուող զիջումներու հետ համակերպուելու իրաւունք չունինք։ Գոյաբանական սպառնալիքի դէմ հանդիման ենք. այսօր՝ մեր լինելիութեան, մեր արժանապատուութեան, մեր ապագայի հարցերը կը կազմեն մեր օրակարգը։ Այս պայմաններուն մէջ ազգային բոլոր ուժերու գերխնդիրը մեր անկախ պետականութեան, հայրենիքի փրկութիւնն է։ Չյաջողելու իրաւունք չունինք։

Բայց արտաքին թշնամիին դիմադրելու համար նախ պետք է մեր տունը կարգի բերենք։ Այսօրուան պայքարը սոսկ իշխանութիւն-ընդդիմութիւն հարթութեան մէջ չէ, սա դասական իմաստով քաղաքական պայքար չէ, այլ պայքար է յանուն արժանապատուութեան, յանուն ազգային արժէքներու վերականգման, յանուն հայրենիքի փրկութեան։ Այս համոզումը արմատաւորելու, այս գիտակցութեամբ պայքարը շարունակելու հարց ունինք։

Մեր ներկայ իրականութիւնը արժէքներու եւ հասկացողութիւններու ձեւախեղուած արտացոլացումն է։ Երեկուան ընտրակեղծարարները կը ներկայանան որպէս արդարութեան պաշտպաններ, նախկին իշխանութիւններուն գլխիկոր ծառայածները դարձած են բարեպաշտ քաղաքական գործիչներ, սակաւապետ-օլիգարխներ՝ մեծ սեփականատէրեր կամ գործարարներ, նախապէս կողոպտուի եւ ուրիշներու բիզնեսներու մեջ փայ մտածները՝ նուիրատուներ, չկայացածները՝ յեղափոխական ու դուխով տղաք, ծախու վախկոտները՝ փողով հայհոյախառն «ստատուս» ու «քոմենիթ» գրող, իսկ բանակէն խուսափածները՝ արցախեան ազատամարտի հերոսներուն հայրենասիրութիւն քարոզողներ։ Հասարակության խեղուած արժեհամակարգը պետք է շտկուի։ Սա իւրաքանչիւր առողջ մտածողութիւն ունեցողի հարցն է։ Քաղաքական նախընտրութիւնները, կուսակցական պատկանելութիւնը, ընկերային (սոցիալական) դիրքը եւ ունեցած հանգամանքը ամենեւին կարեւոր չեն։ Անշուշտ, սա հեշտ գործ չէ, բայց այս է միակ ճիշտ ճանապարհը։

Ներկայիս նոր մարտահրաւէրներու դէմ յանդիման կը գտնուինք, որովհետեւ պարտուած ու ազգային գաղափարախօսութենէ պարպուած Հայաստանի իշխանութիւնները հայրենի շահերը պարտապանելու իրենց անկարողութիւնը փաստած են, շարունակական նահանջի մէջ են միջազգային բեմերու վրայ եւ ամէն տեսակի զիջումներու ալ՝ պատրաստ։ Իսկ Արցախի իշխանութիւնն ալ դարձուցած են կամակատար, այսպիսով նսեմացնելով Արցախի ինքնիշխանութեան մակարդակը։ Բարեբախտաբար Արցախի մէջ կան նաեւ ազգային եւ ինքնորոյն ոյժեր, որոնք ամուր կանգնած են պատնէշի վրայ եւ կը սատարեն Արցախի իրաւունքներու աներեք հետապնդման։

Նոր մարտահրաւէրներու առջեւ է նաեւ Սփիւռքը, որ ցնցումի եւ յուսահատութեան կեցուածքէն պարտի անցնիլ վերստին պայքարի պատրաստակամութեան՝ ի շահ հայրենիքին ու հայութեան։ Ունինք նաեւ

Սփիւռքին նոր աւել եւ կենսունակութիւն ներարկելու խնդիր։ Եւ մանաւանդ՝ ազգային օրակարգ ձեւաւորելու եւ անոր շուրջ ամբողջ հայութիւնը համախմբելու հրամայական։

Այդ մարտահրաւէրներուն դիմագրաւելու ու մեր ընելիքները ճշդելու առաքելութեան պիտի լծուի 34րդ Ընդհանուր Ժողովը ճշդելով յառաջիկայ քառամեակի մեր ռազմավարութիւնը, ուղղութիւններն ու առաջնահերթութիւնները թէ՛ հայրենի, թէ՛ սփիւռքեան ու թէ՛ համահայկական առումով։

Իւրաքանչիւր Ընդհանուր Ժողով իր օրակարգով կը կատարէ ՀՅԴ Բիւրոյի գործունէութեան քննարկումը, ինչպէս նաեւ մշակումը՝ եկող քառամեակի քաղաքական ուղեգծին ու ռազմավարութեան եւ Հայ Դատի գործունէութեան ուղղութիւններուն. ժողովը նաեւ կ'ընդգրկէ ներազգային կացութեան գնահատումն ու քննարկումը, ՀՅԴ կազմակերպական հարցերը, քարոզչական միջոցներն ու քաղաքականութիւնը եւ տնտեսական իրավիճակը։ Այդ օրկարգերուն քննարկման ընդմէջէն պիտի բերեղանան Դաշնակցութեան յաջորդ քառամեակի կեցուածքներն ու առաջնահերթութիւնները։ Այդ որոշումները վստահաբար պիտի հիմնուին մեր երկար տարիներու հետեւեալ համոզումներուն ու իրավիճակի գնահատման վրայ՝

Ա) **Արցախի վերականգնում** – Մեր գնահատմամբ, նոյեմբերի 9-ի տիւրահռչակ, ըստ էության, անձնատուական (capitulation) զինադադարով ոչ թէ վերջակէտ է դրուած ամէն ինչի, այլ նոր գործընթացներ սկսուած են։ Աշխարհաքաղաքական, տարածաշրջանային, ներազգային առումներով մենք միանգամայն նոր իրողութիւններու եւ մարտահրաւէրներու առջեւ ենք կանգնած։ Ունեցած ենք մարդկային, նիւթական, տարածքային եւ տնտեսական առելի կորուստներ։ Անչափելի է նաեւ բարոյական կորուստը՝ վիրաւորուած է հայ մարդու արժանապատուությունը, սասնուած է մեր ազգային ինքնափստահութիւնը։ Հսկայական ընելիք կայ եւ գերջանքեր գործադրելու անհրաժեշտութիւն։ Դաշնակցութեան համար Արցախի հարցը կը շարունակէ մնալ Հայ Դատի բաղկացուցիչ հիմնական մաս, հայոց անկախ պետականութիւնը՝ գերագոյն արժէք։ Այս հասկացողութեամբ եւ նոր պայմաններու թելադրանքով Դաշնակցութիւնն իր քույր կառույցներով եւ համակիրներով քաղաքական, դիւանագիտական, կազմակերպական, տնտեսական, բարեսիրական ուղղություններով լծուած է ամէնօրեայ աշխատանքի։ Մենք հաւատացած ենք, որ ծրագրաւորուած, հետեւողական, ճիշտ աշխատանքի պարագային միայն հնարաւոր է ունենալ երաշխաւորուած յաջողութիւններ։

Բ) **Մէկ ազգի գաղափարի եւ հայրենիք-Սփիւռք միասնութեան ամրագրում** – Որպէս աշխարհասփիւռ ժողովուրդ իսկապէս ունինք մրցակցային առաւելութիւններ, որոնք ՀՀ իշխանութիւնները լաւապէս չեն արժեւորած անցեալին եւ չեն ալ գնահատեր այսօր։ Ժամանակակից համաշխարհայնացման (գլոբալացիա) միջավայրին մէջ մենք ունինք մեր համեմատական մրցակցային առաւելությունները ազգովին լիարժեք օգտագործելու անհրաժեշտութիւն։

Ժամանակն է, որ որպէս համաշխարհային ազգ, կերտենք միաձոյլ հայկական աշխարհ՝ իր առանցքին մէջ ունենալով անկախ Հայաստանն ու Արցախը։ Զաւախահայութիւնը, հայապատկան հողերու վրայ ապրող մեր հայրենակիցները, դասական ու նորաստեղծ Սփիւռքի հայութիւնը մէկ անբաժան միասնութիւն են մեր ազգային լինելիութիւնն ու պետականութեան գոյատեւումը ապահովող։

Ազգովին պարտինք համոզուիլ որ մենք վստահելու ենք միայն մեր հաւաքական ուժերուն վրայ, ոչ արեւելքէն, ոչ ալ արեւմուտքէն իմաստալի օժանդակութեան պատրանքներ սնուցանելով։ Հայկական արեւելումով եւ մեր բազկի, մտքի եէ ձեռներէցութեան վրայ վստահելով միասնաբար պիտի կառուցենք մեր իտէյալ պետութիւնն ու հայկական աշխարհը։ Ազգովին պարտինք վերականգնել հաւատքը մեր ուժերու նկատմամբ, յաղթահարենք հիասթափութիւնները եւ դուռ բանանք նոր յաղթանակներու համար։

Մեր ժողովուրդի միասնականութեան ամրապնդումը էական է մանաւանդ այս օրերուն, երբ Ռուսաստան-Արեւմուտք լուրջ ընդհարումը Ուկրանիոյ հարցով ստեղծած է համաշխարհային պայթնուսփոտնգ կացութիւն, որ իր անդրադարձը կրնայ ունենալ հարաւային կովկասի տարածաշրջանին մէջ, թուրք-Ադրբեջանական ախորժակները առաւել սրելով Հայաստանի ու Արցախի նկատմամբ։ Արդ՝ աւելի քան երբէք պարտինք համախմբել մեր բոլոր ուժերը ի սպաս մեր հայրենիքին։

Հայութեան առջեւ ծառացած մարտահրաւէրնեւորուն մենք ի զօրու ենք դիմագրաւելու, եթէ առաջնորդուինք համահայկական օրակարգով, ըլլանք համախմբուած եւ գործենք միասնաբար։ Մեր խոր հաւատքն է, որ յանձնառու եւ հայրենիքով տոգորուած Սփիւռքը լաւագոյն գրաւականն է հզօր ու ինքնավստահ հայրենիքի։ Եւ փոխադարձաբար՝ իր Սփիւռքը իսկապէս արժեւորող Հայաստանը, Սփիւռքի նկատմամբ յատուկ գուրգուրանք ու հոգածութիւն տածող հայրենիքը լաւագոյն ազդակն է հայ ազգի գոյատեւման ու հայրենիքի ամրապնդման։

Գ) **Որակապէս նոր պետութեան անհրաժեշտութիւն** – Աներկբայ իրողութիւն է, որ կը կայանան եւ յաջողություններ կ'ունենան այն պետությունները, որոնք ռազմավարական յստակ նպատակներ ճշդած են։ Այս առումով մենք խնդիր ունինք։ Փոքր, կենսական տարածքներէ զուրկ Հայաստանը հեռանկար չի կրնար ունենալ եթէ որակապես նոր պետություն չստեղծուի, հիմնուած՝ իր որդիներու մաքուր հայրենասիրութեան եւ անկախ հայրենիքը ամէն գնով պաշտպանելու, զարգացնելու աներեք պատրաստակամութեան վրայ։ Այո, մենք կ'ապրինք այնպիսի տարածաշրջանի մէջ, որ մշտապէս եղած է աշխարհի մեծերու շահերու բախման թատերաբեմ, ուր կազմակերպուած ըլլալը կենսական անհրաժեշտութիւն է։ Հայաստանի մէջ ի վերջոյ պէտք է հաստատուի արժանիների իշխանութիւն, որու հետեւանքով հնարաւոր կը դառնայ կառուցել մեր բոլորի պատկերացրած երկիրը՝ ազատ, արդար ու համերաշխ։

Մենք բաց ենք ամէն տեսակի արժանապատիւ եւ ազգանպաստ համագործակցութեան համար. չունինք որեւէ կաշկանդում եւ պատրաստ ենք երթալու մինչեւ վերջ։ Պետականաշինութեան գործի նոր սկիզբ դնելու հարց ունինք եւ այդ պարտինք ընել ճիշտ քայլերով։

Դ) **Հայոց բանակի եւ մեր ժողովուրդի մարտունակութեան վերականգնում** –Հայոց բանակը բարոյալքուած վիճակի մէջ է այսօր եւ ՀՀ կառավարութիւնը շարունակական փոփոխութեան կ'ենթարկէ անոր հրամանատարական ու սպայական կազմը։ Ամէն հալածանք ու անյարկի փոփոխութիւններ անյապաղ պէտք է դադրին։ Բանակը պարտի դառնալ համազգային գուրգուրանքի եւ հոգածութեան առարկայ։ Մեր աշխարհազրական խիստ վտանգաւոր ու փխրուն պայմաններու մէջ հարկաւոր է զօրաւոր եւ ինքնավստահ բանակ, որ կարողանայ ատակօրէն պաշտպանել հայրենիքի սահմանները։

Ե) **Անապահով խաւերու ընկերա-տնտեսական կացութեան բարելաւում** –Հայաստանի ու Արցախի ժողովուրդի անապահով (ցածր-միջին, աղքատ, թշուալառու) խաւի թիւերը շարունակական աճ կ'արձանագրեն։ Կառավարութեան կիզակէտը պարտի հանդիսանալ այդ խաւին ընկերա-տնտեսական վիճակի բարելաւումը, որպէսզի կենսամակարդական նուազագոյն ընդունելի սահմաններու հասնի անոր եկամուտը, մի քիչ ազատօրէն շնչելու հնարաւորութիւն ունենան այդ խաւի հայորդիները եւ չմտածեն արտագաղթելու մասին։ ՀՀ եւ ԱՀ Աժներու ՀՅԴ պատգամաւորները առաջնահերթութեամբ հետապնդելու են այս հարցը։

Մեր ժողովուրդի սպասումներն ու անկալիքները Դաշնակցութիւնէն միշտ մեծ են եղած՝ յատկապէս դժուար իրավիճակներու պարագային։ Այսօր ալ այդպէս է։ Նոյնիսկ գերազնահատուած սպասելիքներու պարագային երբէք յանձնառութեան պակաս չենք ունեցած։ Այսօր ալ չունինք։ Թէեւ քաջ գիտենք, որ մենք իսկ երբէք չենք բաւարարուիլ արդիւնքներով։

Մեր Ընդհանուր Ժողովները լուի ձեւական հաւաքներ չեն, այլ անկաշկանդ, մտածուած, բազմակողմանի եւ, ինչու չէ նաեւ, բուռն քննարկումներու վայր։ Այդ կը պարտադրէ մեր ներքին առողջ ժողովրդավարութիւնը եւ կարծիքներու անսանձն արտայայտութեան նուիրականացած իրաւունքը։ Իսկ Ընդհանուր Ժողովներու բանաձեւերու կայացումէն ետք, այդ որոշումները իւրաքանչիւր Դաշնակցականի համար կը դառնան ամբողջովին իւրացուած ու գործադրելի յանձնառութիւն։ Այդ կը պահանջէ մեր Դաշնակցականի կարգապահութիւնը եւ ուժականութիւնը։ Այդ խոստումը կու տայ նաեւ իւրաքանչիւր դաշնակցական երբ կ'երդնու «իր պատւոյն եւ հայրենիքին վրայ» միշտ հաւատարիմ մնալ Հ. Յ. Դաշնակցութեան Ծրագրին, Կանոնագրին ու որոշումներուն եւ իր բոլոր ուժերով – իսկ եթէ հարկ ըլլայ՝ նաեւ կեանքի գնով եւ ծառայել Հայաստանի եւ հայութեան ազատագրութեան դատին»։

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ՊԱՏԳԱՄԸ



ԱՂՕԹՔԸ՝ ՄԵԾ ՊԱՀՈՑ ԲԱՆԱԼԻՆ

Մեծ Պահոց քառասնօրեայ ժամանակաշրջանին, Քրիստոս կը հրաւիրէ մեզ Իրեն երթալու և հետևելու. **«Ինծի եկէք դուք բոլորդ, յոգնածներ և բեռնաւորուածներ, և ես հանգիստ պիտի տամ ձեզի»** (Մտ 11:28): Յիսուս, Մեծ Վարդապետը, կը հրաւիրէ մեզ քալելու Իր խօսքի լոյսի ճանապարհէն. **«Ով որ ինծի կը հետևի՝ խաւարի մէջ պիտի չքալէ, այլ պիտի ունենայ այն լոյսը որ կեանքին կ'առաջնորդէ»** (Յհ 8:12): Յիսուսի ընկերակցութիւնը մեզի հետ, արծարծուած աղօթքի և եկեղեցւոյ խորհուրդներուն ընդմէջէն, անհրաժեշտ ոյժն ու համարձակութիւնը կը ներշնչէ հետևելու Իրեն, ապրելու կեանք մը՝ ինչպէս որ Ինք կ'ուզէ: Իսկ Աղօթքը ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ մարդուն երկրէն երկինք փոխադրող աստիճանը: Աղօթքով մենք Քրիստոսի առջև կը կանգնինք և կը միանանք Անոր ու կը յայտնենք, որ պատրաստ ենք ընդունելու Անոր պարգևած շնորհքները:

Քրիստոսի ծառաներն ենք մեր ամբողջ կեանքի ընթացքին և բնականաբար պէտք է կատարենք Անոր ըսածները: Պէտք է կատարենք այն ամէնը՝ ինչ որ Ան մեզ պատուիրած է: Մէկ խօսքով, պէտք է կատարենք Անոր կամքը, ո՛չ թէ Իր գովասանքին արժանանալու համար, այլ ընդունելու Անոր

ողորմութիւնն ու շնորհքը: Իբրև քրիստոնեայ անհատներ, նոյն ձևով պէտք է վարուինք մեր նմաններուն հանդէպ: Չուրախանանք մեղքի մէջ ընկղմուած մարդուն համար, ընդհակառակը, ճաքայ ցոյց տանք, ձեռք երկարենք՝ օգնելու Բարի Սամարացիի նման:

Յիսուս Ինք մեզի յայտնեց, թէ Աստուած մարդասէր և ողորմած Հայր է, որ մեզ կը հրաւիրէ Իրեն դիմելու, հաւատքով ու վստահութեամբ աղօթելու՝ մեր բոլոր կարիքներուն համար: Տակաւին, Յիսուս Ինք էր որ մեզի սորվեցուց, թէ Աստուծոյ աչքին բոլորս ալ արժէքաւոր ու արժանաւոր որդիներ ենք՝ առանց սեռի կամ տեսակի կամ գոյնի տարբերութեան ու խտրութեան, թէ աստուածային բիրեղ, մաքուր, անշահախնդիր սէրն է մարդկային կեանքի առաջին ու միակ կանոնը:

Քրիստոս սորվեցուց մեզի, որ երկու տեսակ աղօթք կայ՝ առանձնակի և հաւաքական: Սակայն երկու պարագաներուն ալ էական պայմանը հաւատքն է:

Աղօթքը, փառաբանութիւն ըլլայ թէ խնդրանք, բարեխօսութիւն թէ գոհաբանութիւն, պէտք է Աստուծոյ կամքին հետ միացած ըլլայ՝ սրտէն բխի. այն ժամանակ այդ աղօթքը հրաշքներ կը գործէ: Ինչպէս Քրիստոս կ'ըսէ. **«Վստահ եղէք, որ եթէ հաւատք ունենաք և չկասկածիք, ո՛չ միայն պիտի կարենաք կատարել թզենիին պատահածը, այլ նոյնիսկ եթէ այս լեռան ըսէք՝ «Եւ և ծով ինկիր», պիտի կատարուի: Եւ աղօթելու ժամանակ ինչ որ հաւատալով խնդրէք՝ կը ստանաք»** (Մտ 21: 21-22):

Քրիստոս մեծագոյն օրինակը հանդիսացաւ իւրաքանչիւր աղօթողի: Ան կ'աղօթէր ամէն ժամանակ՝ գործի սկիզբը և վերջը: Ան աղօթեց ու յաղթեց սատանայի փորձութեան: Ան աղօթեց ու պայծառակերպուեցաւ: Ան աղօթեց նոյնիսկ խաչին վրայ, զինք խաչողներուն համար:

Յաճախ երբ կ'աղօթենք, կ'ուզենք անմիջապէս ստանալ մեր խնդրանքին պատասխանը: Սակայն պէտք է լաւ գիտնանք, որ Աստուած երբեմն կը յետաձգէ մեր խնդրանքին կատարումը այլ նպատակի համար, ինչպէս օրինակ՝ մեզ ամրացնելու, փորձելու և կամ մեր հաւատքը զօրացնելու համար:

Վերջապէս, աղօթքով մենք կը բարձրանանք Աստուծոյ մօտ, հեռանալով աշխարհի հոգերէն և զբաղմունքներէն կը հանգստանանք և կը նորոգուինք հոգևոր ճշմարիտ արժէքներով:

ՄԵԾ ՊԱՀՔՆ ՈՒ ՄԵՂՔԵՐՈՒ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ



Մեղքերու խոստովանութիւնը աշխարհի սկիզբէն սահմանուած կարգ մըն է: Մեր նախաձեռնողները՝ Ադամն ու Եան, ուտելով բարիի և չարի գիտութեան ծառէն, անհնազանդ գտնուեցան Աստուծոյ պատուիրաններուն դէմ, ծնունդ տալով մեղքին, որուն հետ զուգահեռ յայտնուեցաւ նաև Աստուծոյ շնորհքը՝ ողորմութիւնն ու մարդասիրութիւնը: Եւ երբ Աստուած Ադամին ըսաւ.- «Ո՛ր ես» (ԾՆ.9.3), խորքին մէջ այս հարցադրումը հրաւեր մըն էր նախամարդուն, որպէսզի խոստովանէր իր մեղքը. դժբախտաբար մարդը անտեսեց իր յանցանքը և դատապարտուեցաւ:

Ադամ ու Եայէն ետք մեղքը շարունակուեցաւ աշխարհի վրայ: Այսօր ահաւոր մեղքեր կը գործուին և անմեղ մարդ գրեթէ գոյութիւն չունի:

Սակայն Քրիստոսի Յարութեամբ մարդը հնարաւորութիւն ունեցաւ խոստովանութեամբ գտնելու իր հոգեկան խաղաղութիւնը:

Քրիստոնէական եկեղեցին ընդհանրապէս, և հայ Առաքելական եկեղեցին մասնաւորապէս, հնարաւորութիւն ստեղծած են մեղքերու խոստովանութեամբ թողութիւն ստանալու շնորհքին:

Ուրախալի երևոյթ է, որ հաւատացեալներ յաճախ կը խոստովանին իրենց մեղքերը և թողութեան կ'արժանանան, իսկ ան որ չի խոստովանիր իր մեղքերը, անտարանը կ'ըսէ.- **«Արդէն իսկ դատապարտեալ է»:**

Խոստովանութիւնը խորքին մէջ մէկ անգամուան համար սահմանուած արաք մը չէ, այլ ընթացք մըն է, որ վախճան չունի:

Բարսեղ Կեսարացի Հայրապետը մեզի կը յիշեցնէ ըսելով.- **«Խոստովանութիւնը առանց հաւատքի, աղօթքի և ծոմապահութեան իմաստ չունի»:**

- Իսկ Եթէ հարց տանք թէ ինչ է մեղքը.-
- Մեղքը Աստուծոյ կամքին և Անոր Սրբազան օրէնքներուն դէմ գործուած յանցանք մըն է՝ մտածումով, խօսքով և գործով:

Մեղքը կը բաժնուի գլխաւոր երկու մասերու.
Ա- Ադամական կամ սկզբնական մեղք, որ ժառանգած

ենք մեր նախաձեռնողներէն:
Բ- Գործուող կամ ընթացիկ մեղքեր, որ կը գործենք մկրտութենէ ետք, չափահաս տարիքի մէջ: Այս մեղքերը նաև ունին երկու մասեր, գիտակցաբար և անգիտակցաբար: Անգիտակցաբար մեղքերը, որ նաև ներելի կը կոչուին, կը ջնջուին խոստովանութեամբ և Ս. Հաղորդութիւն ստանալով: Գիտակցաբար գործուող մեղքերը, որ աններելի կը կոչուին, մարդս կորուստի կը դատապարտեն:

Մեր եկեղեցին խոստովանելու և հաղորդութիւն ստանալու հարցը մարդուս ազատ խղճին և կամքին ձգած է, սակայն պայման դրած է, որ յաճախ հաղորդուինք:

Քրիստոնէութիւնը խեղճ մարդոց կրօնք չէ: Թոյլ անհատականութիւն ունեցողներ չեն կրնար քրիստոնէական արժանիքները պահել և իրագործել:

Քրիստոնէայի կեանքը պայքար մըն է, որուն ընթացքին կրնանք սխալիլ և մեղանչել. սակայն էականը այն է, որ քաջաբար անդրադառնանք և ընդունինք, թէ՛ գիտակցաբար և թէ՛ անգիտակցաբար գործած բոլոր մեղքերը:

Եկեղեցին, որպէս «Մայր» և միջնորդ մեղքերէ սրբուելու և քաութիւն ստանալու, մեզի առիթը կ'ընծայէ և ցոյց կու տայ խոստովանութեամբ ու պահեցողութեամբ թողութիւն ստանալու ճանապարհը:

Իւրաքանչիւր քրիստոնէայ պէտք է գիտակցի, որ Աստուած առանց մեր մեղքերու խոստովանութեան ալ գիտէ մեր մեղքերը:

Աստուած Եսայի մարգարէի բերնով ըսած է. **«Ես եմ, որ քու յանցանքներդ կը ջնջեմ: Քու մեղքերդ ալ պիտի չիշեմ: Յիշեցնօր ինծի, դուն խօսէ՛ (խոստովանիր), որպէսզի արդարանաս»** (ԵՍ.43.25-26):

Ուրեմն, ընդունինք Աստուծոյ պարգևած ամենամեծ շնորհքը՝ ողորմութիւնը, խոստովանութեամբ ու պահեցողութեամբ մշտապէս նորոգուինք և հաղորդութեամբ սրբուինք բոլոր տեսակի մեղքերէն, կրկնելով շարականա-գիրին բառերը. **«ողորմութեամբդ դատէ՛ ճկ Տէր, այլ ո՛չ թէ արդարութեամբ»:**

Տաթև Աւագ Քահանայ Միքայէլեան

Տիրոջ Օծեալը կու գայ՝...

Աւետարանը հոգիներուն ուղղուած ատեիսն է, և փրկութիւնը որ կ’աւետուի՝ մեղքով Աստուծմէ զրկուած և աղքատացած հոգիներուն, որոնք մեղքին պատճառով իրենց մարդկային ինքնութեան և արժանապատուութեան մէջ կոտրած են ու խորտակուած, որոնք մեղքին գերին դարձած՝ անոր կապանքներուն մէջ կը տուայտին ու կը հեծեն, որոնց հոգևոր տեսողութիւնը կորսուած է և կոյրերու պէս կը խարխալեն փրկութեան ելքին ի խնդիր, իրենց վիրաւոր հոգիին մէջ ամէն օր ապրելով Աստուծոյ որդիութենէն իրենց զրկուածութեան դառն հետևանքները, անատակ որդիին պէս, որ իր հօրը տունէն հեռու և յետին թշուառութեան հասած՝ մտաբերեց թէ ինչպիսի՞ գերազանց փառքի մը կցորդ էր և իր ազատ կամքով զայն կորսնցուց:

ԻՍԿ ԻՆՉ Է ՏՐՈՒԱԾ ԱԻԵՏԻՍԸ

Տիրոջ Օծեալը կու գայ՝

1.- Աղքատներուն աւետելու, թէ երանելի են իրենք, եթէ Աստուծմէ իրենց հեռու վիճակին կը գիտակցին և կ’ուզեն իրենց աղքատացած հոգիները Աստուծոյ ներկայութեամբ հարստացնել ու զարդարել կրկին. որովհետև դէպի Աստուած դարձը իրենց պիտի վերադարձնէ հարստութիւններու հարստութիւնը, որմէ զրկուած էին ժամանակաւորապէս, այսինքն՝ երկինքի արքայութիւնը, որ իրենց է այսուհետև (Մտ 5.3):

2.- Սրտաբեկներուն ու սգաւորներուն մխիթարութիւն բերելու (հմմտ Մտ 5.4), աւետելով թէ եկած է իրենց բժշկութեան ժամանակը, իրենց կողքին է հոգիներու Բժիշկը, ան՝ որ աստուածային սիրոյ դեղատոմսով եկաւ և իր սիրովը բուժեց մարմինները, բայց մանաւանդ մեղքին պատճառով տրտում ու սգաւոր սիրտերն ու հոգիները բուժեց աստուածային ներումին բալասանով, երկրի վրայ պատկերացնելով գալիք արքայութիւնը, ուրկէ ընդմիշտ բացակայ պիտի ըլլան մեղքը և անոր հետևանքները, որովհետև Աստուած **«անոնց աչքերէն ամէն արցունք պիտի սրբէ. այլևս ո՛չ մահ գոյութիւն պիտի ունենայ, ո՛չ սուգ, ո՛չ ողբ, ո՛չ ցաւ և ո՛չ ալ յոգնութիւն»** (հմմտ Յտ 21.4): Այն օրը, կը շարունակէ Եսային, բոլոր սգաւորները պիտի մխիթարուին, մոխիրի փոխարէն փառք պիտի ունենան, սուգի փոխարէն՝ ուրախութեան անուշահոտ իւղը, կոտրած հոգիի փոխարէն՝ գովութեան պատմունք (Ես 61.2-3):

3.- Գերիներուն աւետելու, թէ արձակուած են իրենց կապերէն ու կապանքներէն, որոնց մէջ բանտուած էին իրենց հոգիներն ու մարմինները խաւարին կապանքներով: Որովհետև, ինչպէս կ’ըսէ 107-րդ Սաղմոդը, անոնք **«մահաստուեր խաւարի բնակիչ դարձան, բանտերու խորը շղթայակապ չարչարուելով. որովհետև Աստուծոյ պատուէրներուն ընդդիմացան, արհամարքելով Բարձրեալին կամքը: Տաժանակիր աշխատանքով անոնց հոգին ճնշուեցաւ, տկարացան և ինկան, և չկար մէկը որ օգնէր: Իրենց նեղութեան մէջ ՏԻՐՈՋ աղաղակեցին, և Տէրը զանոնք փրկեց իրենց անձկութիւններէն: Զանոնք դուրս բերաւ մահաստուեր խաւարէն, փշրելով անոնց կապանքները»** (10-14): Իր ժողովուրդը Եգիպտոսի ստրկութենէն արձակող նոյն Տէրն է, որ հիմա կու գայ մեղքով կուրացած իր ժողովուրդը մեղքին և անմարմին Փարաունին՝ Չարին ստրկութենէն արձակելու, անոնց ծառայութեան լուծը խորտակելու, որպէսզի իրեն ապաւինողները բարձրագլուխ քալեն (Ղւ 26.13): Ճշմարիտ Արձակիչն է ան, որ **«մեզ սիրեց և իր արիւնով մեր մեղքերուն շղթաները փշրեց»** (Յտ 1.5), որպէսզի «Մատանային կողմէ գերուած» և մեղքով կարկամեալ հոգիներուն ու մարմիններուն ազատութիւն տայ (հմմտ Ղկ 13.16), անոնց պարանոցէն չարին լուծը հանէ և իր սիրոյ լուծը անցնէ, որպէսզի անոնք իրենց հոգիին հանգիստը գտնեն (հմմտ Օս 11.4: Մտ 11.29):

4.- Կոյրերուն տեսութիւն շնորհելու: Աչքը ստեղծող արարիչ Աստուածը ահա որպէս Օծեալ Տէր, որպէս Բժիշկ ու Փրկիչ կու գայ, **«որպէսզի չտեսնողները տեսնեն և տեսնողները կուրնան»** (Յհ 9.39): Ինչ լաւ արձանագրեր է Վարդանանց հերոսամարտի դիցազներգողը, Եղիշէ Պատմիչ, ժողովրդական իմաստութեան խտացումը. **«Աւելի լաւ է աչքով կոյր ըլլալ, քան՝ մտքով»**: Եւ մտքի կամ սրտի կուրութեան պատճառը դարձեալ մեղքն է: Մեղքով էր որ մարդը կորսնցուց Աստուծոյ տեսութիւնը, որ ունէր սկզբնապէս երանական դրախտին մէջ: Մեղքով է նաև որ մարդ կորսնցուցած է և կը կորսնցնէ ճշմարտութեան տեսութիւնը, որովհետև հպարտութիւնն ու նախանձը, չարակնութիւնն ու թշնամութիւնը, կաշառքն ու ստութիւնը, ցանկութիւնն ու անիրաւութիւնը կը կուրցնեն մարդու միտքն ու սիրտը, կը խափանեն մարդու հոգևոր տեսողութիւնը, պատճառ դառնալով որ մարդ զրկուի Աստուծոյ երանական տեսութենէն, և կոյրերու պէս ապրի իր ներքին խաւարին մէջ, սպասելով անոր՝ Միակին, որ կրնայ բանալ աչքերը մարմնին, ինչպէս աչքերը հոգիին, Անոր, որ եկաւ մեր աչքերը բանալու առաքելութեամբ, և արդարև մեզ **«խաւարէն իր սքանչելի լոյսին կանչեց»** (Ա.Պտ 2.9), մեզի սորվեցնելով նոյնը ընել (հմմտ Հո 2.19):

5.- Եւ, ի վերջոյ, հարստահարուածներուն աւետելու, թէ հասած է ազատութեան ժամը, որովհետև արդէն հասած է երկինքի արքայութիւնը, հո՛ւս է Օծեալ Թագաւորը, երկինքին Տէրը, որուն ձեռքն է փրկութեան դուռը փակելու և բանալու բացարձակ իշխանութիւնը (հմմտ Յտ 3.7), փակելու երկրաւոր կեանքի դժուարութեանց և դժբախտութեանց ժամանակաշրջանը, և բանալու աստուածամերձ կեանքի մը երանութեան անվախճան ժամանակը. վերջ դնելու Աստուծմէ հեռու ապրուած երկրաւոր պանդխտութեան կարօտամաշ օրերուն, և սկզբնաւորելու հոգիին սպասող տունդարձի երջանիկ օրը. բուժելու մեղքով երկիր ինկած հոգիին կոտրած թևերը, և զայն վերստին սլացնելու դէպի բարձունքը յալիտենութեան, անմատոյց լոյսին հաղորդութեան մէջ ապրելու վերստին:

ԶԱՐԵՀ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԶՆԱԻՈՐԵԱՆ





ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ

ԳԼՈՒԽ 16

- Երկնային նշանի հայցում (Մր 16. 1-4)
- Փարիսեցիներու և սադուկեցիներու խմորը (Մր 16. 5-12)
- Ճշմարիտ դաւանութիւն (Մր 16. 13-20)
- Յիսուսի կանխասացութիւնը իր մահուան և յարութեան մասին (Մր 16. 21-23)
- Յիսուսին հետևելու պայմաններ (Մր 16. 24-28)

ԿՈՅՐԵՐԸ ՆՇԱՆ ԿԸ ԽՆԴԻՐԵՆ (Մտ 16.1-4)

Մատթեոսի աւետարանի այս համարներուն մէջ կը պատմուի, թէ ինչպէս փարիսեցիներն ու սադուկեցիները եկան Յիսուսի մօտ, զինք փորձելու, որ երկնքէն նշան մը ցոյց տայ: Յիսուս կը պատասխանէ. **«Չար և շնացող սերունդ մը նշան կ'ուզէ, և սակայն իրեն նշան պիտի չտրուի, բացի Յովնան մարգարէի նշանէն»:**

Մէկու մը հանդէպ թշնամանքը, անհրաժեշտութեան պարագային, տարօրինակ բարեկամութիւններ առաջ կը բերէ: Իսկապէս, տարօրինակ երևոյթ է փարիսեցիներու և սադուկեցիներու միախմբումը. անոնք տրամագծօրէն հակառակ բնեւորներու վրայ կը գտնուէին, թէ քաղաքական և թէ հաւատալիքներու հարցերու մէջ: Փարիսեցիները կ'ապրէին դպիրներու սահմանած և բանաւոր օրէնքներու համաձայն, սադուկեցիները կը մերժէին օրէնսգէտներու օրէնքը ամբողջութեամբ, և կ'ընդունէին Ս. Գիրքի գրաւոր օրէնքները միայն: Փարիսեցիները կը հաւատային հրեշտակներուն և յարութեան, սադուկեցիները՝ ոչ. հակադրութիւն մը, որ Պօղոս առաքեալը լաւագոյն ձևով օգտագործեց ատենաւի առջև իր դատավարութեան ատեն (Գծ 23:6-10):

Փարիսեցիները քաղաքական խմբակցութիւն չէին, և պատրաստ էին ապրիլ ցանկացած իշխանութեան տակ, որ թոյլ կու տար ընթանալ իրենց կրօնական սկզբունքներով. սադուկեցիները, հարուստ ազնուականներ ըլլալով, համագործակցողներ էին հռոմէական իշխանութեան հետ, պահպանելու իրենց հարստութիւնն ու առանձնաշնորհումները: Փարիսեցիները կ'ականակէին Մեսիան, սադուկեցիները՝ ոչ: Նման հակոտնեայ երկու խումբեր անհնար էր, որ ի մի գային, բայց Յիսուսը վերացնելու ցանկութիւնը միաւորեց զիրենք:

Անոնց ցանկութիւնը նշանի մը ականատես դառնալն էր: Հրեաները, մարգարէի մը կամ առաջնորդի մը պատգամի իրայատկութեան առհաւատչեան անոնց կողմէ արտասովոր նշանի մը մէջ կը գտնէին, և կը պահանջէին զայն (Մտ12.38-40): Յիսուսի պատասխանին մէջ նշանը առկայ է, եթէ անոնք կարենային տեսնել: Անոնք եղանակային նշաններու գիտակներ էին. օրինակի համար կ'ըսէին. **«Երեկոյեան կարմիր երկինքը հովիւին համար ուրախութիւն է. սառաւոյեան կարմիր երկինքը հովիւին համար նախազգուշացում է»:**

Յիսուս անոնց կու տայ Յովնան մարգարէին նշանը: Յովնանը այն մարգարէն էր, որ Նինուէացիները չար ճանապարհէն ու չար գործերէն դէպի Աստուած դարձուց. անոնց համար նշանը, որով անոնք դէպի Աստուած դարձան, երբեք ալ կէտ ձուլին Յովնանը կու տալու իրողութիւնը չէր, որուն մասին անոնք ոչինչ գիտէին. Յովնանն ալ զայն չգործածեց իր կոչին ժամանակ: Յովնանի նշանը իր անձն էր և Աստուծմէ ստացած իր պատգամը. մարգարէի և պատգամի միաձուլումն էր, որ Նինուէի ժողովորդին կեանքը փոխեց:

Les prix internationaux du gaz ont grimpé en flèche au cours de l’année dernière. Ils sont désormais bien plus élevés que le tarif de gros russe existant pour l’Arménie, fixé à 165 dollars par millier de mètres cubes.

(RFE/RL)

Les autorités arméniennes défendent le droit de poursuivre pour «insultes»

EREVAN—Le procureur général Artur Davtian a déclaré à un haut diplomate européen que les autorités arméniennes chargées de l’application de la loi ont le droit de poursuivre les citoyens qui insultent le Premier ministre ou d’autres officiels.

M. Davtian a discuté, entre autres, de cette pratique controversée avec Andrea Wiktoria, chef de la délégation de l’Union européenne à Erevan, lors d’une réunion le 3 mars.

Un communiqué publié par le bureau du procureur général d’Arménie indique qu’à la demande de Mme Wiktoria, M. Davtian a présenté en détail les raisons pour lesquelles il est nécessaire de criminaliser les insultes graves en Arménie. Cela, a-t-il dit, est nécessaire pour «réduire ou neutraliser l’ampleur et l’impact des discours de haine», ajoute le communiqué.

Les amendements au Code pénal arménien adoptés l’été

dernier ont fait des «insultes graves» adressées à des personnes dans le cadre de leurs «activités publiques» des délits passibles de lourdes amendes et d’une peine de prison pouvant aller jusqu’à trois mois.

Des centaines de personnes ont déjà fait l’objet d’enquêtes de la part de la police arménienne et d’autres organismes chargés de l’application de la loi en vertu de ces amendements. Selon le bureau de M. Davtian, 31 d’entre elles avaient été formellement inculpées au 1er janvier. La plupart d’entre elles auraient été accusées d’avoir offensé Pachinian ou d’autres représentants de l’État.

Les groupes arméniens et internationaux de défense des droits de l’homme ont exprimé de sérieuses inquiétudes quant aux nouvelles clauses du Code pénal. L’organisme américain de surveillance de la démocratie, Freedom House, a déclaré à plu-

sieurs reprises que leur adoption et leur application mettaient en évidence une «dégradation manifeste des normes démocratiques» en Arménie.

Les représentants des gouvernements européen et américain n’ont pas critiqué publiquement ces poursuites.

La déclaration des procureurs n’a pas précisé si Wiktoria était également concerné par cette pratique. En revanche, le diplomate européen a déclaré que les autorités arméniennes continuaient à mettre en œuvre des «réformes visant à renforcer l’État de droit, la démocratie et les institutions des droits de l’homme» dans le pays.

L’UE n’a fait aucune déclaration sur la rencontre de Wiktoria avec Davtian.

Toutes les formes de calomnie et de diffamation ont été dépenalisées en Arménie en 2010.

(RFE/RL)

L’ambassade d’Arménie en Ukraine évacuée

EREVAN—L’Arménie a annoncé l’évacuation de son ambassade à Kiev le 4 mars, alors que les forces russes continuent de s’approcher de la capitale ukrainienne au neuvième jour de leur invasion.

Le ministère arménien des Affaires étrangères a déclaré que le personnel de l’ambassade avait été transféré dans les villes de Lviv et d’Uzhgorod, dans l’ouest de l’Ukraine, pour des raisons de sécurité. Il a précisé que les diplomates «continueront à travailler et à servir les citoyens arméniens» depuis ces villes.

«Soulignons que l’ambassade de la République d’Arménie en Ukraine est l’une des rares ambassades à avoir travaillé avec tout son personnel et à avoir servi ses compatriotes

pendant tout ce temps, et qu’elle continuera à le faire depuis ses nouveaux locaux», a écrit le porte-parole du ministère, Vahan Hunanian, sur Facebook.

M. Hunanian n’a rien dit du consulat arménien d’Odessa, ville de la mer Noire, dont les observateurs militaires pensent qu’il pourrait être pris par les troupes russes dans les prochains jours. Il a encore affiché des numéros de téléphone d’urgence pour les ressortissants arméniens qui veulent quitter ou ont déjà quitté l’Ukraine et ont besoin d’aide.

Les États-Unis, la plupart des États membres de l’Union européenne et d’autres pays occidentaux ont retiré totalement ou partiellement leur personnel diplomatique de Kiev avant

l’assaut russe qui a débuté le 24 février.

Les estimations du nombre d’Arméniens de souche qui vivaient en Ukraine avant la guerre varient de 100 000 à 400 000. Beaucoup d’entre eux seraient détenteurs de passeports arméniens. L’Union européenne les a autorisés à entrer dans les pays membres de l’Ukraine sans visa Schengen.

Plusieurs Arméniens ont déclaré au service arménien de RFE/RL qu’ils avaient fui Kiev par leurs propres moyens après n’avoir reçu aucune aide de l’ambassade d’Arménie.

«En plus de nous donner des conseils, ils auraient dû organiser les évacuations à temps», s’est plaint l’un d’eux.

(RFE/RL)

Quid des républiques autoproclamées?

GÉRARD MERDJANIAN

Dès le lendemain de la dislocation de l’URSS, les charcutages territoriaux opérés par les bolcheviks dans les années 20 ont éclaté au grand jour. Les populations, voire les ethnies, en question ont demandé le détachement de leur gestionnaire ex-soviétique et leur reconnaissance. Comme il fallait s’y attendre, leurs vellétés ont été durement réprimées.

C’est là qu’intervient la géopolitique des grandes puissances et plus précisément le vieil antagonisme Washington-Moscou, commençant à la création de l’URSS et s’amplifiant au lendemain de la guerre 39-45.

Tout le monde a pensé que suite à la chute du mur de Berlin en 1989, suivie un an plus tard de l’effondrement de l’Union soviétique, le monde bipolaire allait disparaître ; d’autant que le nouveau président russe, était un homme plutôt conciliant. Colossale erreur de penser que les choses allaient en rester là.

Le tsarévitch du 21^e préparait son entrée en scène. Se souvenant de la grandeur de la Russie, mais également de celle de l’Union soviétique avec ses 15 républiques, il a commencé à grignoter les républiques autoproclamées.

L’éclatement de l’URSS en 1990 a généré quinze nouvelles républiques — successeurs des RSS, rapidement reconnus par les Nations-Unis. D’autres hélas, étant des régions autonomes (Oblast) ont été oubliées. D’où des républiques autoproclamées, non reconnues par la communauté internationale.

On notera qu’elles se trouvent toutes, Chypre mise à part, dans les États du partenariat oriental de l’Union européenne.

Certaines sont contiguës à la Russie, par exemple: L’Abkhazie, et l’Ossétie du Sud-Alanie, autoproclamées en juillet 1992, — enclavées en Géorgie; ou bien la Crimée, autoproclamée en mai 1992, et plus récemment le Donetsk et le Lougansk, autoproclamées en mai 2014 — enclavées en Ukraine.

D’autres relèvent de sa sphère d’influence, par exemple: la Transnistrie, autoproclamée en 1991 — enclavée en Moldavie; Ou le Haut-Karabagh, autoproclamée le 2 septembre 1991 — enclavé en Azerbaïdjan.

D’autres enfin ont été créées de toutes pièces, en massacrant et chassant les autochtones. C’est le cas de la République turque de Chypre Nord (RTCN), imaginée et mise en œuvre par la Turquie en 1974 ; et maintenue depuis malgré les résolutions de l’Union européenne et du Conseil de sécurité de l’ONU. Mais Ankara n’est pas Moscou. Il y a les ‘bons’ envahisseurs OTANesques, qui peuvent continuer en Irak et en Syrie et les ‘mauvais’.

Certaines sont reconnues par un ou plusieurs pays, d’autres pas du tout.

Ainsi L’Abkhazie et l’Ossétie du Sud-Alanie sont reconnues en 2008 suite à la guerre russo-géorgienne par la Russie, l’Abkhazie, la Transnistrie, la Syrie, le Nicaragua, le Venezuela et l’île de Nauru.

La Crimée a été purement et simplement annexée par la Russie en 2014, alors que le Donetsk et le Lougansk viennent d’être reconnus par Vladimir Poutine en février 2022.

La Transnistrie n’a de relations diplomatiques qu’avec ses alter-ego: l’Abkhazie, l’Ossétie du Sud-Alanie et le Haut-Karabagh.

Quant à République d’Artsakh (Haut-Karabagh), hormis ses trois alter-ego n’est reconnue par personne, Arménie comprise. Le grand homme qui gouverne l’Arménie, au demeurant excellent coupeur de tête, mais dont la vision en politique étrangère est équivalente à celle d’une taupe, ne se rend pas compte de l’énorme piège tendu par les turco-azéris avec l’aval discret du maître du Kremlin.

Suite au renforcement de l’alliance turco-azérie depuis plusieurs années, et surtout depuis la guerre de 44 jours, le camarade Poutine sait pertinemment que l’Azerbaïdjan est définitivement perdu pour la grande Russie qu’il veut recréer. Pour avoir la paix de ce côté-là — c’est-à-dire des pays musulmans, et s’occuper sérieusement des pays occidentaux, il lâche petit à petit l’Arménie et verrouille ses relations avec l’Azerbaïdjan. Sa «gentillesse» envers l’Arménie, soi-disant son ‘peuple frère’, reste une façade. On en a un aperçu avant et pendant la guerre arméno-azérie de 44 jours. Un autre ‘peuple frère’ en fait les frais actuellement.

Ilham Heydar oglu Aliiev et Vladimir Vladimirovitch Poutine viennent de signer le 22 février à Moscou, une Déclaration sur «l’interaction alliée entre la République d’Azerbaïdjan et la Fédération de Russie». Le travail a commencé il y a un peu plus d’un an, soit deux mois après la fin de la guerre avec l’Arménie, pour aboutir à un document très complet composé de 43 dispositions et couvrant presque tous les principaux domaines d’activité bilatérale.

Pour ne pas être en reste, Poutine a donné à Nigol Pachinian un os à ronger: assurer que le Haut-Karabagh ne sera pas vidé de sa population avec la mise en place de soldats de la paix russes. À noter au passage la manière élégante d’occuper une partie de l’Azerbaïdjan. Et pour agréementer le tout, il lui fait miroiter l’ouverture de la frontière avec la Turquie. Le tout avec l’accord hypocrite, pardon tacite, d’Erdoğan.

Autrement dit: Il y a deux poids deux mesures directement dépendant de la géopolitique des grands ou des blocs.

L’Iran et l’Arménie vont lancer des entreprises communes

EREVAN—Le ministre iranien de l’industrie, des mines et du commerce qualifie sa visite en Arménie de constructive, affirmant que Téhéran et Erevan se sont mis d’accord sur le lancement de coentreprises, rapporte l’ambassade d’Iran en Arménie.

«Nous avons conclu de nouveaux accords avec les responsables arméniens sur la production conjointe de produits pharmaceutiques et d’appareils électroménagers, sur la base desquels les matières premières ou les pièces seront importées en Arménie. Les produits communs seront fabriqués en Arménie et exportés vers d’autres pays», a déclaré le 4 mars Reza Fatemi Amin.

Il avait déjà annoncé que la visite en Arménie visait à élargir les liens commerciaux bilatéraux via des investissements conjoints.

«Cette visite est axée sur l’approfondissement des liens entre l’Iran et l’Arménie via des investissements conjoints, avait déclaré Reza Fatemi-Amin à son arrivée dans la capitale arménienne le 3 mars.

Le ministre iranien était à la tête d’une délégation de haut niveau comprenant des responsables commerciaux et des PDG d’entreprises privées. Il s’agissait de la première visite en Arménie de hauts responsables iraniens depuis la prise de fonction du président Raisi en août 2021.

Le développement de la diplomatie commerciale avec les États de la région figure en tête des priorités de la nouvelle administration iranienne. M. Fatemi-Amin s’est déjà rendue à plusieurs reprises dans les États du golfe Persique (EAU, Qatar et Oman) afin de stimuler les relations commerciales bilatérales.

FACILITER LE COMMERCE BILATÉRAL

M. Fatemi-Amin a également qualifié les réunions avec les responsables arméniens d’utiles, affirmant qu’elles faciliteraient le commerce bilatéral entre les deux pays voisins.

«Au cours de la visite de deux jours, nous avons eu des réunions utiles avec des responsables arméniens visant à ouvrir la voie aux activités conjointes des entreprises iraniennes et arméniennes en matière de transit commercial, de

marketing et de vente», a déclaré le ministre iranien de l’industrie, du Commerce et des Mines.

Ces visites visent également à faciliter le commerce du secteur privé iranien dans les pays voisins et à résoudre les problèmes qui entravent les activités commerciales.

Des dizaines de PDG d’entreprises privées iraniennes ont accompagné la délégation iranienne lors de la visite en Arménie.

DÉVELOPPER LES INFRASTRUCTURES

Selon M. Fatemi-Amin, l’Iran et l’Arménie ont également convenu de lancer des projets d’infrastructure en Arménie.

«Au cours des réunions avec le ministre arménien de l’économie VahanKerobyan et le ministre de l’administration territoriale et de l’infrastructure GnelSanosyan et le vice-premier ministre arménien, nous avons conclu des accords préliminaires sur une série de questions telles que la construction de barrages et de routes par des entreprises iraniennes en Arménie», a déclaré le ministre iranien de l’industrie, des mines et du commerce.

«Nous avons convenu de construire une route de transit pour compléter les projets d’infrastructure en Arménie à long terme. Les entreprises iraniennes participeront également aux appels d’offres correspondants», a-t-il noté.

L’Iran a déjà annoncé qu’il était prêt à coopérer avec l’Arménie pour la construction d’une nouvelle route de transport (route Kajaran-Sisian).

Cette route de 64 kilomètres de long fait partie du couloir de transport Iran-Arménie-Géorgie, qui s’inscrit dans le cadre de la candidature de l’Iran au lancement du couloir de transport Nord-Sud.

Le couloir de transport international Nord-Sud est un réseau multimodal de 7 200 kilomètres de long composé de navires, de voies ferrées et de routes pour le transport de marchandises entre l’Iran, l’Inde, l’Afghanistan, l’Azerbaïdjan, la Russie, l’Arménie, l’Asie centrale et l’Europe.

Il vise à renforcer la connectivité commerciale entre les États de la région et de l’ultra-région.

RÉDUCTION DES DROITS DE DOUANE

Les responsables iraniens et arméniens ont également convenu de réduire les tarifs de transit dans le cadre de l’effort conjoint visant à stimuler le commerce bilatéral.

«En ce qui concerne le transit des marchandises, nous avons conclu deux accords à court et à long terme avec l’Arménie. Nous avons convenu de réduire les tarifs pour les camions de transit à court terme», a déclaré Reza Fatemi-Amin.

La République d’Arménie et la République islamique d’Iran partagent une frontière de 44 km.

Le volume des échanges commerciaux entre l’Iran et l’Arménie s’est élevé à 304 millions de dollars au cours de la dernière année civile perse (du 21 mars 2020 au 20 mars 2021), les deux parties prévoyant de renforcer le commerce bilatéral.

(RadioLour/Armenews)

**ՀԱՄԵՌՆԱՅԻՆ
ԿԵՆՏՐԱՆԱԲԱՆԱԿԱՆ
ՊԱՐՏԷԶ**

**ԿԵՆՏՐԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԻ
ԱԻՆԵԼԻ ԶԱՆ 90%-Ի
ՅՈՒՑԱՐԴՈՒԹՅՈՒՆ, ԱՄԱՌՆԱՅԻՆ
ՍԱԿԻ ՓՈՋԵ ՄԱՍՈՎ՝ 16,99
ՏՈՒԱՐՈՎ:**

**ՏՈՄՍԵՐԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՒ
ԱՄՐՈՂԶԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅԸ
ՏԵՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՅՑԵԼԵ՛՝
WWW.ZOODEGRANBY.COM**

**ZOO
GRANBY**

ՈՍՏԱՅՆ _ Ի ՅՈՒԾ

Հայ դատի անվհատ յառաջամարտիկ՝
Վաղարշակ Վարդանեանը

Ինչո՞ւ զժուարացայ մէկ վերտառութիւն դնելու այս յօդուածիս վերեւ, չկրցայ կամ «Ի յուշ» կամ «Ոստայն» գրել ու ստիպուեցայ երկուքը միացնել: Վաղարշակը հեռանիստ ընկեր մը կամ բարեկամ մըն էր, ու եթէ ի՛ր մասին գրէի միայն, անկասկած «Ի յուշ» պիտի ըլլար վերտառութիւնը: Բայց ան նաեւ երեւո՛յթ մըն էր, ահա թէ ինչու «Ոստայն»–ը աւելցուցի, այդ ալ՝ նախապատուութեամբ:

Արդարեւ, Վաղարշակ անխոնջ մարտական մըն էր, զինակի՛ց մը, ու իր մարտադաշտը մեր լեզուն էր: Կը հաւատար, որ հայութեան վերապրումը, յատկապէս արեւմտահայութեա՛ն վերապրումը արեւմտահայերէնի՛ վերապրումով կ'իրականանար. մի՛այն:

Բայց եկէ՛ք նախ ծանօթանանք այս մարդուն, այս հայո՛ւն:

Ծնած էր Սեւանիկ, 1935 փետրուար 16–ին, մահացաւ Լոս Անճելըս՝ 2022 յունուար 26–ին, զոհ՝ անգութ համալարակին: Այս երկու թուականներուն եւ երկու վայրերուն միջեւ կայ լիարժէք, բայց նաեւ վերի–վայրումներով լի կեանք մը՝ իր տարբեր փուլերով: Զաւակն էր Արշակ Վարդանեանի ու Արեգնազ Գումրեանի:

Իր մասին աւելի խօսելէ առաջ, սակայն, կ'արժէ ներկայացնել իր հայրը, որուն ազգային ոգիի ժառանգորդն ու կրիչը հանդիսացաւ ինք:

Արշակ Վարդանեան Տարօնի Տերգնանք գիւղէն էր, Մեծ եղեռնին՝ որբացած, Յունաստան ափ առած: Ուրիշ որբ մը՝ Խոսրով Տէրէպէկեան, օրին (1984 մայիսին «Հայրենիք»–ի, 1986 դեկտեմբերին ալ «Ասպարէզ»–ի մէջ) իր «Մշեցի Արշակը» յօդուածով , կը պատմէր թէ ինչպէս, երբ վեց որբեր շրջակայ գիւղ մը կը դրկուին աշխատելու, «Տաք–տասնհինգ ոտք անդին հուժկու երիտասարդ մը՝ միմիայն ճերմակ շապիկով, գլխաբաց և թեզանիքները վեր, ձիուն սանձը բռնած ուշի–ուշով մեզի կը հետեւէր: Զին թողուց եւ յուշիկ մեզի մօտեցաւ: Եւ այդ ցուրտ օդին աւելի քան ժամ մը խօսեցաւ: Խօսեցաւ թրքական դազանային ոճրագործութիւններուն մասին և անոնց ձգած արհաւիրքին, եւ խօսք տուաւ, որ յաջորդ կիրակի մեզի «Հայրենիք» օրաթերթ պիտի դրկէ, ինչպէս եւ «Հայրենիք» ամսագիր՝ մասնաւորապէս շեշտելով կարգալ Ռուբէնի «Հայ յեղափոխականի մը յիշատակները»: 1924–ի ձմռան էր, որ չնորհիւ այդ անձին՝ Արշակին, կորիզը դրուեցաւ ՀՅԴ–ի, եւ օրէ–օր աճեցաւ և բազմացաւ՝ փրկելով հարիւրաւոր որբերը ձուլումէ: Եւ կազմուեցաւ մեր շրջանի ՀՅԴ–ն»:

Այդպէս է, որ Դաշնակցութեան շարքերը կը խտանան այնտեղ, 300–400 հոգիի կը հասնին, կը կազմուի Սարալանջի ենթակոմիտէութիւնը: Արշակ կը շարունակէ իր գործուն մասնակցութիւնը բերել շրջանի, ապա Սեւանիկի հայութեան կազմակերպումի գործին:

Տէրէպէկեան կ'աւելցնէ. «1947–ին Հայաստան ներգաղթեց, որ իր կեանքին մտասեւեռումն էր: Կուզէր իր ընտանիքով խաղաղ կեանք մը ապրիլ: Սակայն 1948–ի մայիսին ՔէՅՅ ձի Պի–ն գինք կը ձերբակալէ իր չգործած յանցանքին համար եւ եօթը տարուան բանտարկութեան ու յաւելեալ հինգ տարուան ազատ աքսորի կը դրկէ Սրպերիոյ սառնամանիքները»:

Ուրեմն Վաղարշակ, որուն մեծ եղբայրը՝ Բաբգէնը, արդէն իրմէ տարի մը առաջ Հայաստան ներգաղթած էր ուսանելու համար, ինք եւս կ'ուսանի Երեւանի «Պոլիտեխնիկական ինստիտուտին» (Ճարտարագիտական հիմնարկին) մէջ:

Իր գաւկէն ստացուած հօրը կենսագրական տեղեկութիւններուն մէջ կը կարդանք. «1956 թուականին, Վաղարշակն աւարտելով Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտը, ի զարմանս բոլորի, փոխանակ ընդունելու իրեն առաջարկուած՝ նոյն ինստիտուտի ամբիոններից մէկում դասախօսի պաշտօնը, ինքնակամ խնդրել էր իրեն տալ Կրասնոյարսկ քաղաքի գործարաններից մէկում աշխատելու (բոլոր աւարտածների համար անցանկալի) ուղեգիրը՝ բացատրելով դա իր “ուսանողական ռոմանտիկայով”: Եւ այսպիսով մօր [այդ անվախ հայուհիին — Վ.Ա.] հետ այդ ուղեգրով մեկնել էր աշխատելու այնտեղ, ուր իմացել էին, որ գտնւում է հայրը՝ Արշակը: Նրանց հիմնական նպատակը գտնելն էր իրենց հօրն ու ամուսնուն, որ գտնւում էր այնտեղ որպէս քաղաքական “ազատ աքսորեալ”: Վաղարշակը Կրասնոյարսկ քաղաքի գործարաններից մէկում որպէս ինժիներ, և դրան կից տեխնիկումում որպես ուսուցիչ աշխատելու ընթացքում փնտռել ու գտել էր իր հօրը: Այնուհետեւ վերամիառնորուած ընտանիքը, 1957 թուականին առաջին հայրենադարձութիւնից տաս տարի յետոյ երկրորդ հայրենադարձութեամբ վերագարձաւ Հայաստան՝ Երեւան»:

Վաղարշակ այնտեղ կ'աշխատի իբր դասախօս իր յաճախած համալսարանին մէջ, կ'ամուսնանայ էլիզաբեթ Բասորմաշեանի հետ, կ'ունենան երկու զաւակ՝ Մարգարիտան ու Արթուրը, իսկ 1984–ին կը տեղափոխուին Լոս Անճելըս, ուր ան կը շարունակէ դասաւանդել տեղւոյն զանազան գոլեճներուն մէջ ուսողութիւն, բնագիտութիւն, տարրաբանութիւն եւ վիճակագրութիւն: 1986–ին UCLA համալսարանին մէջ իր դոկտորականը կը պաշպանէ օդատիեզերական ճարտարագիտութեան մէջ: Կ'անդամակցէր զանազան մասնագիտական միութիւններու, ինչպէս նաեւ կարգ մը հայկական կազմակերպութիւններու՝ «Նոր վերնատուն հասարակական–մշակութային միութիւն», «Յունահայերու միութիւն» եւ այլն:

Երեք հիմնադիրներէն մէկն է «Մեսրոպեան ուխտ» լեզուապահպանական միութեան, որու հիմնական նպատակը եղած է պայքարիլ, իր իսկ բառերով՝

«Հայաստանում դասական ուղղագրութիւնը վերականգնելու համար»:

Այս ճամբով ալ եղաւ ի՛մ առնչութիւնս Վաղարշակին հետ: Արդարեւ, 2013–ին, այդ ուխտի համահիմնադիր իր ընկերը՝ այժմ նոյնպէս ողբացեալ Նշան Որբերեանը անոր ու իմ միջեւ կապը կը ստեղծէր, իմ երկար տարիներ ի զուր հետապնդած հայերէն առցանց արդի բառարանի ծրագրին կապակցութեամբ: Այդ թուականէն մինչեւ իր մահը մնացինք սրտակից զինակիցներ, յաճախ երազելով երբեմն անիրագործելի թուող նախաձեռնութիւններ: Իր ամենէն վերջին ցանկութիւններէն մէկը, որուն մասին կը խօսէինք տակաւին անցնող դեկտեմբերին, Կուկըլի վրայ արեւմտահայերէնն ալ գետեղել տալն էր՝ աւելի քան 180 լեզուներու կողքին, թարգմանութեան կարելիութեամբ:


Վաղարշակ տարբեր ժամանակներու գրած իր յօդուածներէն փունջ մը հատորիկի մը մէջ ամփոփելու բախտաւորութիւնը ունեցաւ, զայն տիտղոսաւորելով «Արեւմտահայութեան փրկութեան հիմնախնդիրը / Լեզուական հարցեր» (Լոս Անջելես, 2021): Աւարտելու համար այս անպաճոյճ տողերը ընկերոջս յիշատակին, կ'ուզեմ անկէ կատարել մէկ մէջբերում, որ կ'արտայայտէ Վաղարշակի խոր նուիրումը արեւմտահայերէնի, ու լեզուի ալ ճամբով՝ արեւմտահայութեան պաշտպանութեան հարցին:

Ան կը գրէ. «Ժամանակին արեւմտահայերին փրկելու համար նրանց կողքին կոռուղ արեւելահայերին կարելի է ներկայացնել Նիկոլ Դումանի հաւաքական կերպարով: Այսօր կարող ենք տալ հոետորական հարց՝ ու՞ր են մերօրեայ նիկոլդումանները. չէ՞ որ այսօր աւելի շատ արեւմտահայ է “կոտորուում”, քան այն ժամանակ: Եւ տալիս ենք մեր հարցի պատկերաւոր պատասխանը՝ մերօրեայ նիկոլդումանները այսօր էլ պէտք է գէնքը առնեն ու կռուեն արեւմտահայերի կողքին: Այդ «գէնքի» անունն է արեւմտահայերէն: Դա նշանակում է, որ արեւմտահային փրկելու համար արեւելահայը (ներառեալ պարսկահայը) պէտք է նրա նկատմամբ հոգատարութիւն ցուցաբերի՝ “ընդամէնը” մի բան անելով՝ նրա հետ արեւմտահայերէն՝ խօսելով: Ուստի պէտք է այդ “գէնքը” գործածել սովորել, իմա՝ արեւմտահայերէն սովորել»:

Ինծի նուիրած այդ գրքի մակագրութեան մէջ ան կ'ըսէր, «Սիրելի գործընկեր, համոզուած եմ, որ դուն՝ երդուեալ արեւմտահայ, կարդալով այս գրքոյկը, պիտի լծուիս արեւմտահայութեան փրկութեան ազգանուէր գործին»:

Վստահ եմ, միայն ինծի չէր ուղղուած այդ խօսքը…

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ

 Chadir Meat & Restaurant T. 416-750-7404 T. 416-750-7400 1848 Lawrence Avenue E. Scarborough, ON M1R 2Y4 E-mail: info@ghadirmeatmarket.com	 House of Taste and Quality 2094 Lawrence Ave. E. Unit # 2 Scarborough, ON. M1R 2Z6 Tel: 416.754.1888 416.441.2450	 ALEPPO KEBAB Rest. Chef Zak Cell: 416-701-9191 647-323-5950 1960 Lawrence Ave. E., Scarborough, ON M1R 2Z1 (Lawrence and Tower Dr) www.aleppokebab.ca
 ARZ fine foods The Essence of Mediterranean Gourmet Since 1989 Website: arzfinefoods.com Email: info@arzfinefoods.com Scarborough Location 1909 Lawrence Ave E, Scarborough, ON M1R 2Y6 (416) 755-5084 Mississauga Location 720 Bristol Rd W, Mississauga, ON L5R 4A5 (905) 502-9292	 Sutton Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage 1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0 Annie Varbedian Sales Representative Direct: (416) 918-3615 Office: (416) 739-7200 Fax: (416) 739-9367 annievarbed@hotmial.com www.suttongroupadmiral.com	 hearing aid source Andre Ayvazyan HIS B.A.S andre@HearingAidSource.ca 416 754 4327 (HEAR) Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9
 Gary Chahinian President, Broker of Record 416-258-8892 Gabriel Chahinian Sales Representative 647-580-5818 The Diamond Realty	 I.D.A. Part of the Royal family of pharmacies. Pharmacists Sarkis Balian Vartan Balian Maral Abdalian Balian Cassandra Pharmacy Inc. 2040 Victoria Park Ave. Toronto, Ontario M1R 1V2 Tel. : 416.449.2040 Fax: 416.449.2048	 ANI BAKERY ԱՆԻ ՓՈԱՊԱՆ Middle Eastern Pizza Lahmajoun ARSEN DABBAGHIAN 25 Howden Road, Unit #2 Scarborough, Ontario M1R 3C8 Tel: 416.285.7164

Վիզէն Թորիկեանի Յիշատակին

Ծ.Խ.- Ստորեւ, կը հրատարակենք իր հարազատներէն՝ Զաւէն Թորիկեանի կողմէ պատրաստուած այս գրութիւնը, որ կարդացուեցաւ յուղարկաւորութեան օրը։

Մուխը որ կ'ելլէ ծխնելոյզէն դուրս

Հպարտ է այնքան

եւ այնքան լեցուն

Ինքնիրմով

Կարծես երկինքը պիտի նուաճէ

Մինչդեռ – չի գիտեր – պիտի տարածուի

Պիտի ափռուի օդին մէջ անծիր

Ու պիտի փոշի դարձած անհետի

Մենք ալ – պատանի – էինք մուխ հպարտ –

Փոշի ենք այսօր կորսուած անհետ։

ՄՈՒԽՆԸ

Զահրատ
Պոլիս - 1970

Քանի մը տարի առաջ էր։ Հանդիպեցանք Պոսթըն։ Յանկարծ գրպանէն հա-նեց բջիջայինը եւ ըսաւ. «Քեզի ցոյց պիտի տամ վերջին տարիներու անբաժանելի ընկերոջս նկարը»։

Զարմանալի նկար մըն էր ցոյց տուածը։ Ո՛չ իր կողակիցը չէր, ո՛չ զաւակներն ալ չէին, ո՛չ ալ թոռնիկը եւ հարազատները։ Դեռ աւելին, «Նշան Փալանճեան» ձեմարանի իր դասընկերներն ալ չէին։ Կը սպասէի տեսնել իր նախասիրածը՝ խմբային նկար մը, որ յաւելեալ վկայութիւն մը պիտի ըլլար, թէ որքա՜ն ընկերա-սէր էր ինք։

Զէ՛. տարբեր նկար մըն էր Վիզէնին ցոյց տուածը։ Կարծէք թէ օտար մոլորա-կէ նշմարուած տարօրինակ կառոյցներ... Պոչաւոր աստղ, քառանկիւն քարակոյ-տեր, ձուաճեւ կամ ալյանդակ արբանեակներու՝ sci-fi յիշեցնող ողբսական մը, վիթխարի խաւարային անջրպետի մէջ։ Խորհրդապաշտ տեսարան եւ խորհրդաւոր... ընկերակից։ Ան ձեռքի բջիջայինին մէջ ներմուծած էր իր քաղցկեղին՝ քանսէրին նկարը։ «Այնքան ատեն, որ չի դաւաճաներ, մօտիկ բարեկամ–ընկերս կը մնայ», ըսաւ Վիզէն, դառն ժպիտի հետքով մը, բաւական ջղադրգիւ եւ քիչ մըն ալ մտա-հոգ։

Այդ էր ցոյց տուած նկարը, կամ աւելի ճիշդը՝ իր «ամենամօտիկ ընկերը», որուն հետ ստիպողաբար եւ տուայտանքով պիտի գոյակցէր։

Քաջ տղայ էր Վիզէնը։ Այդ դէպքն ու զրոյցը պատահեցան, երբ այդ խորհրդաւոր «ընկերը» չէր դաւաճանած։

Աւելի խիզախ եւ կտրիճ Վիզէն մըն էր, որ հազիւ երկու ամիս առաջ անակն-կայօրէն հեռաձայնեց։

Ընկալուէէն լսեցի իր ինքնավստահ բառերը. «Վերջին անգամ կը զանգեմ, որովհետեւ դժուարութեամբ կրնամ սեղմել տառերն ու թիւերը։ Գրել ալ չեմ կրնար։ Ձեռքերս կը դողդողան։ Մուխս կը մարի։ Բայց եթէ անհրաժեշտ բան մը ըլլայ, շուրթին կը տեղեկացնեմ, կրնանք ձեւով մը կապ հաստատել եւ զրուցել»։

Ինքզինք զօրաւոր պահած էր, սակայն այդ քստմնելի «ընկերը» սկսած էր դաւաճանել։ Այո՛... Կը դողդողար, կը սրսփար։ Բայց՝ քաջաբար եւ առանց ընկր-կելու։

Վե՛րջը... Այլեւս առիթ չեղաւ խօսելու։ 16 Փետրուարի վաղ առաւօտեան, Հուրին հաղորդեց իր կողակիցին առյաւէտ ճամբորդութեան գոյժը։

Վիզէն Թորիկեան



Ծնած է Պէյրութ, 18 Ապրիլ 1960–ին։

Աւարտած է Համազգայինի «Նշան Փալանճեան» ճեմարանը, ապա Ամերիկեան համալսարանէն վկայուած իբրեւ «mechanical engineer», 1982–ին։

«Masters»–ի ուսման համար ժամանակաւոր մեկնած է Ամերիկեան միացեալ նա–հանգներ, ապա գործի բերմամբ վերադարձած «Abu Dhabi», ուր յաճախ գտնուած է անապատին մէջ աշխատանքի պատասխանատուութեամբ, իբրեւ «Shlumberger» ընկե–րութեան երկրաչափ։

1986–ին ամուսնացած է Հուրի «Cynthia» Համամճեանին հետ եւ ունեցած է երկու զաւակներ՝ Հրայր եւ Արամ, ապա ընտանիքին միացաւ հարսը՝ Նանորը, ապա Վիզէն փախտաւորուեցաւ աղջիկ թոռնիկով մը՝ Միլենան, որ դարձաւ կեանքի, ուրախութեան եւ սիրոյ աղբիւրը։

1990–էն ի վեր հաստատուած է Մոնթրէալ, ուր իր ասպարէզը կիրարկեց «Bombardier» եւ «Rolls–Royce» ընկերութիւններուն մէջ։

Վիզէնը ունեցած է նաեւ միութենական գործունէութիւն, իբրեւ ճեմարանի շրջա–նաւարտից միութեան անդամ եւ աւելի ուշ՝ Մոնթրէալի Սուրբ Յակոբ եկեղեցւոյ հոգա–բարձու եւ կրթական գործադիր մարմնի անդամ։ Բարձր մարդկային արժէքներու տէր անձ մըն էր եւ հաւատաւոր հայ, որ կը հաւատար հայ դպրոցի առաքելութեան կարեւո–րութեան։

Հայաստանն ու արցախը իրեն համար իւրայատուկ տեղ ունէին, կը հաւատար հայրենիքին եւ անոր ի խնդիր, իր ոճով, անանուն կերպով օգտակար դարձաւ տարբեր ծրագիրներու։

Ընթերցանութիւնը իր նախասիրած ժամանցներէն մէկն էր, կը կարդար ամէն տե–սակ նիւթերու մասին, սակայն մեծ հետաքրքրութիւն ունէր հայոց պատմութեան հան–դէպ, կը կարդար, կը վերլուծէր եւ կը բացատրէր։

Վիզէնը հանդարտ, ուղամիտ, ազնիւ, սրամիտ, իրատես, կատակասէր եւ լաւատես մէկն էր։ Բարի եւ հեռատես։

Արկածախնդրութիւնները սիրող եւ փորձող անձ մը, որուն համար օդանաւն ու նաւը, երկինքն ու ջուրը կենդանութիւն տուող տարրեր էին։

ԾՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Այսու կու գանք, մեր խորին շնորհակալութիւնը յայտնելու Գերաշնորհ Տ. Բաբգէն Արք. Զարեանին, արժանապատիւ Տ. Գառնիկ Աւագ քհն. Գոյունեա–նին, Սուրբ Յակոբ առաջն. Մայր եկեղեցւոյ Հոգաբարձութեան, ՀՕՄԻ կեդրո–նական վարչութեան, ՀՄԸՄ Պէյրութի մասնաճիւղի վարչութեան, ԼՕԽ–ի Շրջանային վարչութեան, Համազգայինի Նշան Փալանճեան–Արսլանեան ճե–մարանի շրջանաւարտներու միութեան, «Հորիզոն» շաբաթաթերթի խմբագրու–թեան, ՀՕՄԻ Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղի վարչութեան, Ս. Յակոբ Մայր եկեղեցւոյ ՀՕՄԻ Ծաղկոցի տնօրէնութեան եւ անձնակազմին, Ա. եւ Պ. Մար–գարեան մանկամսուրի Տնօրէնութեան,հեռու եւ մօտ հարազատներուն, բարե–կամներուն եւ բոլոր անոնց որոնք ծաղկեպսակով, հեռաձայնով եւ նուիրա–տուութեամբ ցաւակից եղան մեր սուգին, մեր սիրելի ամուսնոյն, հօր, մեծ հօր, զաւկին եւ եղբօր՝ ողբ. ՎԻԳէՆ ԹՈՐԻԿԵԱՆի մահուան առթիւ։ Սգակիրներ՝ տիկ.Հուրի Թորիկեան եւ ընտանիք, տիկ. Տիգի Թորիկեան եւ ընտանիք։

ԾՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Այսու կու գանք մեր խորին շնորհակալութիւնը յայտնելու Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Բաբգէն Արք. Զարեանին, Գերշ. Տ. Սուրէն Արք. Գաթա–րոյեանին, Արժ. Տէր Գառնիկ Աւ. քհնյ. Գոյունեանին, Արժ. Տէր Յակոբ Քհնյ. Գյա–տայեանին, «Հորիզոն» շաբաթաթերթի խմբագրութեան եւ անձնակազմին, ՀՕՄԻ «Սօսէ» մասնաճիւղի վարչութեան, Ս. Յակոբ Առաջնորդարանիստ Մայր եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ բոլոր անոնց որոնք անձամբ, նուիրատուութեամբ, բացիկով, հեռաձայնով կամ ընկերային ցանցերու միջոցաւ ցաւակից եղան մեր սուգին, մեր սի–րելի հօր, մեծ հօր, եղբօր, մօրեղբօր եւ հարազատին՝ ՅԱԿՈԲ ՆՈՆՈՒՏԵԱՆի մահուան եւ քառասունքին տխուր առիթներով։ Սգակիրներ՝ Նոխստեան, Կրպոյեան, Քիւս–պէկեան, Մարտիրոսեան, Դարբինեան, Մահտեան եւ Չազալեան ընտանիքներ։

www.horizonweekly.ca

horiZon H O R I Z O N Hebdomadaire arménien Armenian Weekly Publié par / Published by Les Publications Arméniennes (1991) 3401, Olivar-Asselin Montréal, Québec Canada H4J 1L5	Abonnement annuel / Yearly subscription Canada 2 ^e classe - 2 nd class: \$80 plus applicable taxes 1 ^{re} classe - 1 st class: \$95 États-Unis / USA 1 ^{re} classe - 1 st class: \$95 US Ailleurs / Elsewhere 1 ^{re} classe - 1 st class: \$125 US	Administration / Publicité Sylva Ehramdjian-Bachekjian (General Manager) Tél.: (514) 332-3757 E-Mail: sylva@horizonweekly.ca Courrier de deuxième classe /No. 40065294 / Second class mail Dépôt légal: bibliothèques nationales du Québec et du Canada - ISSN 0708580X	Վարիչ Խմբագիր՝ Վահագն Գարագաշեան Վարչական պատասխանատու՝ Սիլվա Պաշոգճեան Քարտուղար՝ Մարինա Տըր Խաչատուրեան Աւագ խմբագիր՝ Վրէժ-Արմէն Արքիմեան Անգլերէն/Յրագութեւն՝ Վիզէն Արքա– համեան, Թիմա Սիվահեան Չեւաւորում եւ Սրբագրիչ՝ Քրիստափոր Միքայէլեան
Գրիգոր Հոթոյեան, (416) 494-1921 Ժազ Վարպետեան, (416) 722-9225			
Թորոնթոյի Ներկայացուցիչներ՝ Լուսանկարիչներ՝ Արմէն Ալեմեան, Մայք Թաշճեան, Իշխան Ղազարեան, Վազգէն Տէկիրմէնթաշ			

Financé par le gouvernement du Canada Funded by the Government of Canada	Canada
---	---------------



ADONIS



NOS MAGASINS

2001 Sauvé O,
Montréal, QC H4N 3L6
(514) 382-8606

4601 boul.Des Sources,
Montréal, QC H8Y 3C5
(514) 685-5050

8880 boul. Leduc,
Brossard, QC J4Y 0G4
(450) 656-9595

2425 boul.Curé Labelle,
Laval, QC H7V 1R3
(450) 978-2333

225 Rue Peel,
Montréal, QC H3C 2G6
(514) 905-6499

2173 St-Cathrine O,
Montréal, QC H3H 1M9
(514) 933-4747

3100 boul. Thimens,
Montréal, QC H4R 0C9
(450) 904-6789

2655 Ave. Des Aristocrates,
Laval, QC H7E 0H3
(450) 665-8801

7250 boul.Des Roseaies,
Anjou, QC H1M 2T5
(514) 493-6667

1240 Ave Eglinton O,
Mississauga, ON L5V 1N3
(905) 363-0707

1055 St-Laurent boul,
Ottawa, ON K1K 3B1
(613) 778-8883

920 boul.Maloney O,
Gatineau, QC J8T 3R6
(819) 317-1737

Suivez-nous !



www.groupeadonis.ca

20 Ashtonbee. Road,
Scarborough, ON M1L 4R5
(416) 642-1515

2561 Stanfield Rd,
Mississauga, ON L4Y 1R6
(365) 207-0200

1700 Rue Bouvier
Québec, QC G2K 1N8
(581) 890-9994



BARRY KAZANDJIAN KAREN KAZANDJIAN ALEX KAZANDJIAN GARO KAZANDJIAN



EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

CLASSÉS PARMIS LES MEILLEURS COURTIERIS RE/MAX AU NIVEAU MONDIAL
RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS WORLDWIDE



SIÈGE SOCIAL: 9280 BOUL. DE L'ACADIE, MONTREAL QC H4N 3C5
PAVILLON: 2500 RUE DES NATIONS #102, SAINT-LAURENT, QC H4R 3J9